ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

17 ՄԱՅԻՍԻ
2024 թ.
№ 9 (1125)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԵՐԹ ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Հրաչյա ՍԱՐՈՒԽԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Դու իմ հետադարձ հասցեն ես միակ
Եվ իմ եզակի ճակատագիրը,
Իմ բաց երգերը, իմ վերքերը փակ,
Իմ հիշատակաց միակ Երկիրը...
Անկրկնակոշիկ Համապատմության
Սայթաքումները մեզ աղավաղել
Եվ թաց երգերս փակ վերքերիս մեջ
Սատանայաբար փորձել են թաղել:
Որպեսզի դառնամ թափառող ծրար՝
Չունենամ նույնիսկ
հետադարձ հասցե,
Բայց մենք վերստին
փարվել ենք իրար
Ու հուսաբանել՝ Տեր, մի արասցե...
Դու իմ հետադարձ
հասցեն ես միակ,
Իմ անկրկնելի ճակատագիրը,
Իմ բաց երգերը, իմ վերքերը փակ,
Իմ հիշատակաց միակ Երկիրը:

2024 թվական: Մայիսի 9: Լրացավ Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի 79-րդ տարին: Հաղթանակ, որում մեծագույն սխրանքով իր սուրը փառքով պատյան դրեց հայ ժողովուրդը:

Տարիների հետ այդ պատերազմի մասնակիցների թիվը նոսրանում է, տարիներ առաջ Մանկավարժական համալսարանի երթը առաջնորդում էին բուհի պատերազմի վետերանները, որոնք այսօր արդեն չկան: Համալսարանականների երթին մի առանձին շուք էին հաղորդում նրանց կրծքներին փայլող շքանշանները:

Արցախյան պատերազմը ի չիք դարձրեց մեր մայիսյան փառահեղ հաղթանակները. մայիսյան եռատոնը դարձրեց հիշողություն: Ահա ինչու, արդեն քանի տարի, Մայիսի 9-ը տարբերվում է նախորդներից՝ մայիսյան եռատոնով հպարտանալու զգացողության բացակայությամբ պայմանավո-րված:

ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ հայ ժողովուրդը պայքարել է ֆաշիստական Գերմանիայի դեմ: 1941 թվականի հունիսից մինչև 1945 թվականի մայիս խորհրդային բանակ է զորակոչվել մոտավոր 500 հազար հայ: Ընդ որում հայ ժողովուրդն այդ պատերազմում տվել է 64 գեներալ, ԽՍՀՄ 106 հերոս, 4 մարշալ և 1 ծովակալ: Ծովային 6 օդաչուների թվում եղել է Նելսոն Ստեփանյանը: Պատերազմի ընթացքում ձևավորվել են վեց՝ 76-րդ, 89-րդ, 390-րդ, 409-րդ, 408-րդ և 261-րդ հայկական դիվիզիաները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայ ժողովրդի զավակների փառքը երբեք չի խամրի. ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել: Նրանց մեծ մասը հիշողություն է դարձել, նրանց մասին պատմություններով դաստիարակվող սերունդը պետք է շարունակի ապրել նրանց հայրենասիրության դասերով: Փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր վտանգելով իրենց կյանքը, խիզախորեն պայքարեցին և սխրանքների գնով մոտեցրին հաղթանակը:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները Մայիսի 9-ի վաղ առավոտյան համալսարանի բակում՝ Արցախի առաջին պատերազմում զոհված համալսարանականների հիշատակը հավերժացնող հուշաքարի մոտ, ծաղկեպսակ դրեցին, ապա ռեկտոր Սրբուհի Գևորգյանի գլխավորությամբ հիշատակի երթ իրականացրին դեպի Հաղթանակի հուշահամալիր, որտեղ ևս ծաղկեպսակ դրեցին ու ծաղիկներ խոնարհեցին հայ զինվորի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ՝ հարգանքի ու հիշատակի տուրք մատուցելով Հայրենական մեծ պատերազմում զոհված հայորդիների հիշատակին:

Նոր սերունդը Արցախի երկրորդ պատերազմում հայրենասիրության ու հերոսության բազմաթիվ օրինակներ տվեց և ապացուցեց, որ նախորդներից ժառանգած հայրենապաշտության կրողն է:

«Կա մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերին հոգով, մտքով և արյունով, այն է՝ ազգային սերը»:

ՐԱՖՖԻ

Մանկավարժական համալսարանում էր Սերբիայի դեսպանը

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը մայիսի 15-ին հյուրընկալեց Հայաստանում Սերբիայի արտակարգ և լիազոր դեսպան Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովիչին:

Հանդիպմանը ներկա էին նաև բուհի Աշխատակազմի և միջազգային համագործակցության, Ուսումնագիտական գծով պրոռեկտորներ Մարիաննա Հարությունյանն ու Մարիամ Իսպիրյանը:

Դեսպանն ընդգծեց՝ առաջին անգամ չէ Մանկավարժականում. կարևորում են բուհի հետ ակտիվ գործակցությունը, իսկ հայ-սերբական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի շրջանակներում պատրաստ են քննարկել նոր ծրագրեր իրականացնելու հնարավորություններն ու համագործակցության ընդլայնումը:

Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովիչն անդրադարձավ մասնավորապես Մանկավարժականում սերբերենի ուսուցման բաժին բացելու հեռանկարներին: Նա նշեց, որ աշխարհում նման բաժին գործում է 3 երկրում միայն: Պաշտոնավարման ընթացքում հասկացել է՝ կա սերբերենի թարգմանիչների անհրաժեշտություն:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց դեսպանին մանկավարժական

մայր բուհում հյուրընկալվելու առթիվ և հավաստիացրեց՝ պատրաստ են ծավալել արդյունավետ համագործակցություն՝ ի նպաստ հայ-սերբական հարաբերությունների ամրապնդման նաև կրթության ոլորտում:

Ռեկտորը նկատեց՝ ծրագիրն իրագործելուց առաջ, նախ պետք է հաշվի առնել, որ Մանկավարժականը ուսուցիչներ պատրաստող բուհ է. անգլերենից և ռուսերենից բացի, տարեցտարի նվազում է լեզուներ ուսումնասիրել ցանկացող դիմորդների քանակը:

Սրբուհի Գևորգյանը հավելեց՝ բուհն ունեցել է նմանատիպ փորձ. կարծում է, որ նախ անհրաժեշտ է մոնիթորինգ անցկացնել, ապա, ըստ անհրաժեշտության և պահանջի, իրագործել ծրագիրը:

Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն էլ լեզվի ուսուցման հնարավորությունը իրատեսական համարեց բուհում մշակույթի կենտրոնի հիմնմամբ և սերբական բուհերի հետ համագործակցության շրջանակներում:

Պրոռեկտորը ներկայացրեց այլ երկրների, մասնավորապես՝ Բուդապեշտի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ համագործակցության փորձն ու ընդգծեց՝ պատրաստ են գործակցել նաև Էրազմուս + ծրագրի շրջանակներում:

Մարիաննա Հարությունյանը հավելեց՝ Մանկավարժականում տևական ժամանակ գործում է չինարենի, ռուսերենի կենտրոններ. առաջիկայում նախատեսվում է հիմնել հունգարական մշակույթի կենտրոն՝ նպաստելով լեզվի հանրահռչակմանը:

Կողմերը քննարկեցին լեզվի ուսուցման ներկայիս դժվարությունների, ուսանողների հետաքրքրվածության բարձրացման, դասավանդման մեթոդիկաների, ծրագրի իրագործման այլընտրանքային հնարավորությունների մասին:

Դեսպան Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովիչը հանդիպմանը ներկայացրեց նաև «Աշխարհը Սերբիայում» կրթաթոշակն ու այն հնարավորությունները, որ ծրագիրն ընձեռում է հայ ուսանողներին:

Կողմերը հույս հայտնեցին, որ համատեղ ջանքերի շնորհիվ կրթական ոլորտում կշարունակեն ամրապնդել հայ-սերբական հարաբերությունները, իսկ համատեղ նախաձեռնությունների իրականացումը կնպաստի համագործակցության արդյունավետությանը:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Ամփոփեցին մեկամսյա այցի արդյունքները

Ապրիլի 12-ին մեկամսյա ժամանակահատվածով Մանկավարժական համալսարան էին այցելել Ղազախստանի Աբայի անվան մանկավարժական համալսարանի Մանկավարժության և հոգեբանության ինստիտուտի Հատուկ մանկավարժության ամբիոնի 4 դոկտորանտ՝ նպատակ ունենալով ծանոթանալ Մանկավարժական համալսարանի գիտական գործունեության առանձնահատկություններին, համալսարանի փորձին, կրթական ծրագրերին, առցանց դասավանդման ձևաչափին:

Դոկտորանտները արտասահմանյան գիտական ղեկավար էին ընտրել ընտրել ՀՊՄՀ Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ Ժաննա Պայլոզյանին:

Մայիսի 8-ին նրանց ընդունեց

ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը՝ ամփոփելու ղազախ դոկտորանտների՝ համալսարանում գտնվելու գործունեության արդյունքները:

Ղազախ գործընկերները համալսարանում գտնվելու մեկամսյա այցի ընթացքում, ներառական և համընդհանուր ներառական կրթության ուղղություններով՝ իրենց հետաքրքրությունների շրջանակում, Ժաննա Պայլոզյանի ուղեկցությամբ հաճախել են Երևանի տարբեր ուսումնական հաստատություններ: Ժաննա Պայլոզյանը պարբերաբար անց է կացրել անհատական խորհրդատվություն յուրաքանչյուրի համար՝ կապված թեզերի և հոդվածների հետ, եղել են Հատուկ կրթության ֆակուլտետում, համալսարանի գրադարանում, ուսումնասիրել են իրենց ոլորտին վերաբերող թեզեր, ուսանողների շրջանում անց են կացրել իրենց թեմաներին առնչվող հարցումներ, հատուկ հանդիպումներ են ունեցել Հատուկ կրթության ֆակուլտետում ու ՀՊՄՀ գիտական կենտրոնում:

Մեկամսյա գործունեության ընթացքում նրանք հասցրել են ծանոթանալ իրենց անհրաժեշտ բոլոր նյութերին, համալսարանում արժանացել ջերմ ու բարյացակամ վերաբերմունքի, ինչի առթիվ արտահայտեցին իրենց գոհունակությունը: Կրթական ծրագրերի տեսանկյունից, համեմատելով իրենցը, նրանք ընդգծեցին որոշ ընդհանրություններ և առանձնահատկություններ:

Ժաննա Պայլոզյանն էլ շնորհակալություն հայտնեց պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանին՝ բոլոր հարցերում իրենց աջակցելու համար:

Պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը սերտիֆիկատներ ու խորհրդանշական նվերներ հանձնեց հյուրերին, տեղեկացրեց, որ նրանց համալսարանի ղեկավարությունն էլ ցանկություն է հայտնել այցելելու Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան:

«Հուսանք, որ մեր համագործակցությունն էլ ավելի կընդլայնվի՝ ձեռք բերելով նոր՝ ավելի բարձր մակարդակ»,-ասաց Մարիամ Իսպիրյանը:

Որպես երկրորդ կուրսի ուսանողներ՝ նրանք դեռ աշխատանքներ ունեն իրականացնելու, հոդվածներ կտպագրեն մեր համալսարանի պարբերականներում և բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ «Թեքեյան» կենտրոնի ցուցասրահում մայիսի 14-ին բացվեց գեղանկարիչ, ՀՀ արվեստագիտության դոկտոր, ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանի անհատական ցուցահանդեսը՝ տարբեր տարիների լավագույն ստեղծագործություններից շուրջ 30 աշխատանքի ներկայացմամբ:

Ցուցադրությանը ներկա էին ՀՀ նկարիչների միության անդամներ, ՀՊՄՀ ղեկավար և դասախոսական կազմը, ուսանողներ ու արվեստասերներ:

Հայաստանի «Թեքեյան» մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը ցուցահանդեսի բացումը կարևոր իրադարձություն համարեց, նկատելով՝ Արա Հակոբյանը ստեղծագործելիս անսահման բերկրանք է ապրում, ինչն արտահայտվում է նաև նրա կտավներում:

«Ցուցահանդեսը մեկ անգամ ևս հնարավորություն է տալիս ուղղվել դեպի գեղեցիկի աշխարհը, փոխներգործելու արդյունքում և մեր հոգեկանի տիրույթում ունենալ հույսի, լույսի, գույնի, գեղեցկության, ներդաշնակության ընդհանրացումը, այն, ինչը պակասում է մեր օրերում»,- ասաց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

«Մեր օրերը կարծես նմանվում են ալեկոծված ծովի, և այդ ծովի մեջ արվեստն այն կարևոր նավակներից է, որտեղ շտապում են բոլոր նրանք, ովքեր հայտնվել են դրանում: Խորհրդանշական է, որ այս օրերին բացվում են նման ցուցահանդեսներ. այս քաոսային իրավիճակում արվեստն այն ապահով, խաղաղ, անվտանգ և իմաստուն հանգրվանն է, որ մեզ հաղորդ է դարձնում աստվածային շնորհի արտահայտություններին,-ասաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Թանգարանների և արխիվի տնօրեն Ասողիկ աբեղա Կարապետյանը՝ ներկաներին փոխանցելով Վեհափառ հայրապետի օրհնությունը:-Արվեստի ճանապարհով մարդը կերտվում է, իմաստնանում, այդ ճանապարհով է նաև, որ հաղորդ է դառնում աստվածային մշակույթին»:

Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանն էլ Արա Հակոբյանին բնութագրեց որպես պարզ, մաքուր սիրտ ունեցող արվեստագետ, ով ազնիվ ու արդար է մարդկային փոխհարաբերություններում, ինչն էլ արտահայտված է նրա նկարներում:

Ցուցահանդեսի այցելուներն ըմբոշխնեցին գեղանկարչի արևային ու փիրուզյա նրբերանգներով աչքի ընկնող գեղանկարները՝ իրենց հետ տանելով Արա Հակոբյան նկարչի փիլիսոփայական ընկալումների ողջ ներկապնակը:

Գալիս եմ տիեզերքից, Աստծուց, ընտանիքից...

«Երբ ինձ հարցնում են, թե ինչ ոճով եմ ստեղծագործում, պատասխանում եմ՝ ես փորձում եմ միայն մեկ ոճի կամ մեկ ձևի ենթարկվել՝ լինել անկեղծ իմ արվեստի նկատմամբ»,-ասում է ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Արա Հակոբյանը:

-Ո՞վ է Արա Հակոբյանը. կբնութագրե՞ք Ձեզ:

-Մարդ, որն ապրում է արվեստով, որն ուզում է մի բարի գործ թողնել, գոհացնել մեր հասարակայնությանը:

-Ե՞րբ սկսեցիք նկարել:

-Սկսեցի նկարել, ինչպես բոլորը, մանուկ հասակից, սակայն այն դարձավ մի չարաճճի զբաղմունք, որովհետև դպրոցական տարիքում սկսեցի նկարել դպրոցական նստարաններին: Երբ ինձ նկատեցին մասնագետները, ասացին, որ պետք է գնալ նկարչական ուղղվածությամբ. և արդեն՝ մասնավոր պարապմունքներ, նկարչական ստուդիաներ, դպրոցներ, բուհ և այլն:

-Կերպարվեստի ոլորտում ի՞նչ տվեց Ձեզ կրթությունը: Եվ հնարավո՞ր է նկարել առանց տաղանդի՝ միայն կրթությամբ և աշխատասիրությամբ:

-Կերպարվեստի ոլորտում կրթությունը շատ մեծ նշանակություն ունի: Ոչ միայն կրթությունը, նաև ում մոտ ես ձևավորվել, կրթվել: Տարբեր երկրներներում կան տարբեր մասնագիտական կրթական հաստատություններ, բայց կան դասական կրթական հաստատություններ, ակադեմիաներ, որտեղ այդ դպրոցը պահպանում է իր ակադեմիականը և հետո ազատություն է տալիս, և դու կարողանում ես ինքնուրույն ստեղծագործել: Իմ բախտը բերել է, և ես ուսանել եմ հանրապետության այնպիսի նշանավոր արվեստագետների մոտ, ինչպես ՀՀ ժողովրդական նկարիչ, իմ դիպլոմային աշխատանքի ղեկավար Անատոլի Պապյանը: Երբ ես սովորում էի Հայաստանի գեղարվեստի ակադեմիայում, ուսանել եմ Մկրտիչ Սեդրակյանի, Գրիգոր Աղասյանի մոտ... Երախտավորներ, որոնցից յուրաքանչյուրը ինձ փորձեց դարձնել նկարիչ:

Ինչ վերաբերում է առանց շնորհի նկարելուն, կարելի է նկարել, բայց դա ի վերուստ տրված շնորհ է՝ գումարած աշխատասիրություն և կրթություն:

-Ի՞նչ է Ձեզ համար զգացողությունները կտավին հանձնելը. ասել է թե՝ ինչ է Ձեզ համար ստեղծագործական պրոցեսը:

-Ապրելակերպ: Եվ այդ ապրելակերպը ուխտ է, որին գնում ենք տանջալից աշխատանքով, բայց հասնում ենք նպատակին:

-Ունե՞ք նախընտրած գույներ, թե՞ գույնի ընտրությունը ժամանակն ու ապրումներն են որոշում:

-Թերևս երկրորդը: Այսօրվա ցուցահանդեսում դուք կտեսնեք և՛ մեղմ, և վառ գույներով աշխատանքներ: Ցանկացած մարդ, եթե ազնիվ է իր արվեստում, չի կարող նույնը և՛ ամռանը տեսնել, և՛ ձմռանը կամ տարբեր տարիքում տեսնել: Յուրաքանչյուր առավոտ նորովի ես արթնանում՝ նոր մտածելակերպով, նոր փիլիսոփայությամբ, ինչը բնականաբար պետք է ազդի քո արվեստի վրա, եթե այն անգիր չէ, այլ ստեղծագործական և զգայական է:

-Թվարկեք Ձեր նկարներից Ձեր կարծիքով ամենալավագույնները:

-Դա սուբյեկտիվ կլինի, բայց կուզեի ինձ համար որպես հոգեհարազատ ու զգայական, առանձնացնել հայրիկի և մայրիկի դիմանկարները:

-Ովքե՞ր են Ձեզ հոգեհարազատ նկարիչները: Ինչո՞ւ:

-Գիտեք, ես հրապուրված եմ ֆրանսիացի հանճարեղ նկարիչ, քանդակագործ Օնորե Դոմիեյի արվեստով: Ինձ համար նա արվեստի ուղենիշ է, վերելք: Դե կարող ես պարբերաբար սիրահարվել Գոգենի, Մատիսի արվեստին, թանգարաններ այցելելիս նոր բացահայտումներ անել, և նոր ոգեշնչող աշխատանքներ ի հայտ գան, բայց Դոմիեն ինձ համար միշտ բարձունքում է: Հայ արվեստում ինձ ոգեշնչում է արվեստի և գույների կախարդ Մարտիրոս Սարյանը:

-Հաճա՞խ եք ցուցադրություններ կազմակերպում: Քանի՞ անհատական ցուցահանդես եք ունեցել:

-Սա կարծես թե վեցերորդն է: Բայց հաճախ չեմ կազմակերպում, որովհետև խորհրդային շրջանից հետո այս անհատական ցուցահանդեսներն իրենց արժեքը փոքրինչ կորցրել են: Յուրաքանչյուր ցուցահանդեսին նկարիչը նորովի պետք է ներկայանա, պետք է տեսանելի լինի ինչ նոր գործեր են ստեղծվել, թե չէ նույն աշխատանքներով անընդհատ կարելի է ցուցադրություններ կազմակերպել, ինչը կլինի կրկնություն: Այդ իսկ պատճառով ես ինձ փորձում եմ զուսպ պահել և հաճախակի չկազմակերպել ցուցահանդեսներ:

Արա Հակոբյանի «Խաղաղ գարուն Հայոց աշխարհին» կտավը

-Ճիշտ ապրելու Ձեր բանաձևը:

-Լինես մարդ, որովհետև կյանքը անցողիկ է, և բարի գործեր թողնես, որ գոնե մեկ սերունդ քեզ հիշի և բարի հիշի. դա ամենակարևոր գրավականն է:

-Ընտանիքի դերը Ձեր նախընտրած ոլորտի հարցում:

-Ընտանիքի դերն արվեստագետի համար և՛ խանգարող, և՛ օգտակար հանգամանք է: Որովհետև պետք է կարողանաս ժամանակ հատկացնել ընտանիքին, երեխայի դաստիարակությանը: Միաժամանակ ընտանիքը ոգևորեցնող է: Եթե շրջեք ցուցասրահում, կտեսնեք, որ ներկայացված բոլոր նկարները ֆիգուրատիվ են. կտեսնեք, որ նկարներում պատկերված է իմ ընտանիքը՝ ծնողներս, երեխաներս, կինս: Ընտանիքն այս դեպքում օգուտ է տալիս, նաև ոգևորում է:

Ստեփանավանի Դենդրոպարկում նկարում էի, մի ավտոբուսից երեխաներ իջան ու խմբվեցին իմ շուրջը. երևի իրական նկարիչ չէին տեսել: Այդ պահին տղաս ճեղքելով երեխաների խումբը՝ երեխաներին հպարտությամբ ասաց՝ հայրիկս է:

Աչքս բացել եմ արվեստի միջավայրում և տան պատերին տեսել եմ հայրիկիս աշխատանքները: Դա շատ լավ է: Հովնաթանյան նկարչական տոհմը 6-7 սերունդ արվեստագետներ տվեց, հիշենք էլիբեկյանների, Բաշբեուկ Մելիքյանի ընտանիքները, որ նույնպես մի քանի սերունդ արվեստագետներ տվեց: Դա շատ ընդունված է նաև արհեստագործների մոտ: Դա գեղեցիկ ավանդույթ է:

-Վարչական աշխատանքը չի՞ խանգարում ստեղծագործելուն. նկատի ունեմ ժամանակի սղությունը:

-Ես չեմ հիշում հանգիստ պահ: Իմ ապրելակերպը կարծես քսանչորսժամյա աշխատանք է: Աշխատանք գիտական, կրթական, ստեղծագործական ոլորտում... Պետք է աշխատել, վաղը այդ ուժերը կարող են քեզ լքել... Պետք է պահը, ժամանակը բաց չթողնել: Շատերը զարմանում են, թե ինչպես եմ հասցնում: Պետք է հասցնել:

-Ի՞նչը չի բավարարում արվեստի մարդուն ներկա ժամանակներում, ի՞նչ խնդիրներ կան ոլորտում, և դրանք լուծելի՞ են արդյոք:

-Մեզ պակասում է պետական-ազգային մտածելակերպը, սիրել արվեստը: Յուրաքանչյուր նկարչի ցուցադրությունը պետք է մի յուրահատուկ միջոցառում լինի արվեստասեր հասարակայնության համար:

Մենք պետք է գնահատենք արվեստը, գնահատենք արվեստագետին, մտավորականին, մանկավարժին:

-Որտեղի՞ց է սկսվում և որտե՞ղ ավարտվում գեղանկարչի ազատությունը:

-Աշխարհի շատ արվեստի գլուխգործոցներ, առավելապես Վերածննդի շրջանում, ստեղծվել են պատվերների շնորհիվ: Իհարկե, արվեստագետը ինչ-որ տեղ ազատ է, բայց վերջին խոսքը ասում են Հռոմի պապերը կամ ֆլորենտացի մեծահարուստները: Դրանք շտկվում էին ըստ պատվիրատուի ցանկության, բայց ստեղծվում էին գլուխգործոցներ: Մենք հրաշալի ստեղծագործություններ ունեինք Խորհրդային շրջանից, նկատի ունեմ սոցռեալիստական արվեստը: Հիշենք իմպրեսիոնիստ նկարիչներից Գոգենին, որը լքեց ընտանիքը և գնաց Թահիտի՝ ստեղծագործելու ազատ, առանց որևէ մեկի պատվերի:

Այնպես որ ազատ ստեղծագործելը հարաբերական է: Տաղանդավոր մարդը միշտ կդրսևորի իր տաղանդն ու շնորհը:

-Որտեղի՞ց է գալիս Արա Հակոբյան գեղանկարիչը և դեպի ո՞ւր է գնում:

-Իմ կողմից շատ մեծարված ֆոբիզմի նահապետ և հիմնադիր հանճարեղ Գոգենը ունի մի աշխատանք՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում: Երբ որ այդ աշխատանքի խորագիրն ամբողջությամբ հասկացվի, միգուցե մենք էլ կարողանանք պատասխանել:

Գալիս եմ տիեզերքից, Աստծուց, ընտանիքից և գնում դեպի...

-Ամփոփենք. այսօրվա Ձեր անհատական ցուցահանդեսի մասին ի՞նչ կասեք:

-Ես շնորհակալ եմ Թեքեյան մշակութային միությանը, որը կազմակերպել է այսօրվա նկարահանդեսը: Արվեստագետը չի կարող և՛ ստեղծագործել, և՛ կազմակերպել միջոցառումներ: Այդ առումով ես շնորհակալ եմ Թեքեյան միությանը իմ անհատական ցուցահանդեսը ներկայացնելու համար: Շնորհակալ եմ նաև Մանկավարժական համալսարանին, որտեղ աշխատում եմ արդեն 20 տարի: Մեկը մյուսին լրացնելով՝ ընտանիք, աշխատավայր, հասարակական կազմակերպություններ, բերում են արդյունքի:

-Ի՞նչ կցանկանայիք:

-Կցանկանայի, որ արվեստագետին միշտ նայեն ավելի բարի ու ներողամիտ աչքերով, որպեսզի մենք էլ կարողանանք մեր աշխատանքներով իրենց գեղարվեստական ճաշակը հարստացնել:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Ուսուցչի իմ օրինակը

Եթե ընտրել եմ ուսուցչի մասնագիտությունը՝ իրավունք չունեմ նահանջելու

1995 թվականի սեպտեմբերին ուսանողական նստարանից անմիջապես հետո աշխատանքի անցա Լոռու մարզի Ալավերդու N 2 միջն.դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Ավարտել եմ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը:

Ընդգծեմ, որ ավարտել եմ այդ նույն դպրոցը և վերադարձա արդեն որպես ուսուցիչ՝ սկսելով աշխատել ինձ դասավանդած ուսուցիչների հետ: Մեծ պատկառանք ունեի նրանց հանդեպ, ինձ դեռ աշակերտ էի պատկերացնում նրանց միջավայրում, հետո հունի մեջ ընկա: Դժվար տարիներ էին՝ մութ ու ցուրտ, դասասենյակների մեծ մասը տնակներում էր: Դպրոցում դասապրոցեսը փայտի կամ նավթի վառարանների շուրջն էր, իսկ տանը երեխաներին սպասում էր նավթավառը, որի լույսի տակ պիտի դաս սովորեին:

Այս պայմաններում երեխաներից դժվար էր լիարժեք դաս պահանջել կամ մոտիվացնել: Ընկերացա նրանց հետ, իսկ երբ տնօրենը դասղեկություն վստահեց, պատասխանատվության զգացումն ավելի խորացավ: Ոգևորում էի նրանց հետաքրքիր պատմություններով, նշանավոր մարդկանց օրինակներով, գնում էինք արշավի, խարույկի շուրջ երգում էինք, արտասանում, իրար հետ հաց կիսում: Բայց կարևորը հավատն էր վաղվա օրվա նկատմամբ, գիտելիքի նկատմամբ, վստահ էինք, որ մութ օրերից հետո արև է ծագելու:

Եղել են նաև այլ դժվարություններ, հիասթափություններ, բայց մեջքս շտկել եմ ու շարժվել առաջ, որովհետև գիտակցել եմ, որ եթե ընտրել եմ ուսուցչի մասնագիտությունը, ուրեմն իրավունք չունեմ նահանջելու, որովհետև սերունդների դաստիարակության գործը նաև ինձ է վստահված, որովհետև եթե սիրում ես աշխատանքդ, ապա կհարթես բոլոր դժվարությունները:

Տարիների ընթացքում հասկացել եմ դպրոցի կարևորությունը, հասկացել, որ ,յուրաքանչյուր ազգի համար հացից հետո գլխավորը դպրոցն է, իսկ մորից հետո՝ ուսուցիչը (Ժորժ Ժակ Դանտոն):

21-րդ դարի սովորողների հետաքրքրություններն այլ են: Դասավանդողը պետք է ամեն կերպ բարձրացնի մանկավարժական որակավորումը, ձգտի իր նկարագրով ու վարքագծով հեղինակություն վայելել, հավատ ու վստահություն ներշնչել, տեղեկացված ու հաղորդակից լինել նոր գործընթացներին և ամեն կերպ նպաստել ուսուցման մթնոլորտի ձևավորմանը: Սա բարդ, հարատև, բայց միաժամանակ կարևոր և պատասխանատու գործ է: Կցանկանամ, որ դպրոց ոտք դնող յուրաքանչյուր անձ գիտակցի այս ամենի կարևորությունը:

Գոհար ԳԱԼՍՏՅԱՆ
Ալավերդի քաղաքի Հովհ. Թումանյանի անվան N 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Մանկավարժի մասնագիտության մասին անվերջ կարելի է խոսել...

Վերոնշյալ կարծիքին են Սկզբնական կրթության ֆակուլտետի երկու ուսանողուհիներ՝ Արուսը և Կարինեն: Վերջերս նրանք հյուրընկալվել են «ԱյբՓոդ» փոդքաստին, որտեղ և զրուցել են մանկավարժի մասնագիտության և իրենց ընտրության մասին:

Հրավերն ստանալով՝ շա՜տ ոգևորվեցինք, քանի որ սիրում ենք պատմել մեր մասնագիտության մասին խոսել, իրազեկել հանրությանը և դիմորդներին՝ նշելով թե ինչ առաքինի և վեհ մասնագիտություն է ուսուցչի մասնագիտությունը: Քննարկման ժամանակ մենք պատասխանել ենք այն հարցին, թե ինչու ենք ընտրել ուսուցչի մասնագիտությունը, եթե աշխարհում բազմաթիվ ավելի բարձր վարձատրվող մասնագիտություններ կան, որոնք էլ գրավում են երիտասարդներին: Մեր պատասխանը եղել է միանշանակ՝ սերը երեխաների հանդեպ, և այն բարձր պատասխանատվությունը, որ ապագա սերունդների կրթությունը մեր ձեռքերում է, և հենց մենք ենք առանցքային նշանակություն ունենալու պետականաշինության մեջ: Այս և շատ այլ հանգամանքներով պայմանավորված՝ շարունակում ենք տեր կանգնել մեր մասնագիտությանն ու պատվով պահել մանկավարժի կոչումը:

Ներկայացրել ենք, թե որքան կարևոր է ուսուցչի դերը մտածող, արժանապատիվ հասարակություն ձևավորելու գործում: Խոսել ենք, թե ժամանակակից աշխարհում որքան մարտահրավերների և դժվարությունների ենք հանդիպում ոլորտում, բայց միաժամանակ որքան պատվաբեր ու արժանապատիվ է մեր կատարած գործը:

Շատ կարևոր է նաև ամենօրյա կարգով ինքնակրթությամբ զբաղվելը: Մենք մեծ ոգևորությամբ ներկայացրինք համալսարանի՝ կողմից առաջարկվող ինքնակրթվելու հնարավորությունները՝ միջոցառումների, գիտաժողովների և ուսումնաճանաչողական այլ ծրագրերի տեսքով, սեփական օրինակով կիսեցինք ինքնակրթությանն ուղղված մեր փորձառությունը: Իսկ վերջում դեռահասներին հորդորեցինք՝ մասնագիտական կողմնորոշման հարցում գիտակցված որոշումներ կայացնել և ձգտել լինել ընտրած ոլորտի լավագույն մասնագետը:

Կարինե ԱՎԱԼՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետ
Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, 3-րդ կուրս

Արուս ԱՅՎԱԶՅԱՆ
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
3-րդ կուրս

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

ԻՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՄԻՋԱՎԱՅՐ

Հինգերորդ դասարանի աշակերտուհի էի, երբ որոշեցի, որ ցանկանում եմ ուսուցիչ դառնալ: Հասակակիցներս ունեին բազմագույն երազանքներ՝ տիեզերագնացից մինչև դերասան: Ի հակադրություն նրանց դյուրափոփոխ նպատակների՝ իմը չափազանց հստակ էր. տասը տարեկան երեխայի համար օժտված էի զարմանալի վճռականությամբ: Տարիներն անցնում էին՝ խորացնելով թե՛ գիտելիքներս, թե՛ սերս հայոց լեզվի և գրականության հանդեպ: Որքան հասունանում էի, այնքան գիտակցում էի մայրենի լեզվի մարտիկ դառնալու, սերունդ կրթելու պատիվը և պատասխանատվությունը, մանավանդ որ մեծացել եմ մանկավարժների ընտանիքում:

Հասավ այն կետը, որից բեկվելու էր կյանքիս ուղին, և որից հետո մտնելու էի մեծ կյանք: Հանձնեցի ընդունելության քննություններն ու ընդունվեցի համալսարան: Այն ավետաբեր օրը, երբ իմացա, որ արդեն ուսանող եմ, քաղցր հիշողություններիս տնակի պատվարժան բնակիչն է: 2022 թվականի հուլիսի 18. ստացա հաղորդագրություն, որ ընդունվել եմ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի առաջին կուրս, անվճար համակարգ: Տանը մենակ էի. ամառային պայծառ և արևազարդ օրը ջերմացնում էր սիրտս՝ քշելով վախերի ու անորոշության մռայլ ամպերը: Ես երջանիկ էի: Մայրիկս աշխատանքի էր. լսելով ուրախալի նորությունը՝ հուզվեց և ասաց, թե որքան է հպարտանում ինձնով: Արևային երեկո էր, երբ իմ գերագույն արևը՝ մայրս, վերադարձավ աշխատանքից՝ վարդերի փունջ ձեռքին, և ամու՜ր- ամու՜ր գրկեց ինձ, այնքան ամուր, որքան կարող են թույլ տալ անբացատրելի հպարտությունն ու անսահման սերը: Նման հուզական պահերի մասին միայն գրքերում էի կարդացել: Դուրս եկանք զբոսնելու, տեսանք համալսարանի պատին փակցված ցուցակը. անվճարների շարքում առաջինն իմ անունն էր:

Խորհրդավոր երեկոն ամբողջացավ բազում շնորհավորանքներով, որոնցից հիշարժան է ուսուցչուհուս շնորհավորանքը: Ամառն անցավ սպասման մեջ. մեծարենցյան արտահայտությամբ՝ «ըսպասման հիվանդն» էի: Ես սպասում էի մի նոր ժամանակաշրջանի, որ բացվում էր իմ առաջ՝ իր հետ բերելով հասունացում, գիտելիքներ ու հնարավորություններ:

Եկավ սեպտեմբերի 1-ը, որին անսահմա՜ն երկար էի սպասել: Մուտք գործեցի մի շենք, որը պիտի դառնար ամենահարազատն ու արժեքավորն ինձ համար: Գնացինք ընթերցասրահ: Դեկան Աշոտ Գալստյանը շնորհավորեց բանասերների հզոր բանակին անդամագրվելու կապակցությամբ: Հաջորդեցին ամբիոնների վարիչների ելույթները: Հասկացա, որ արժանացել եմ մեծանուն ու հայրենանվեր գիտնականների սանը դառնալու պատվին:

Համալսարանն ինձ տվեց նաև անչա՜փ սիրելի ու հարազատ ընկերներ, որոնց հետ շփվում եմ անընդմեջ՝ համալսարանում, տանը, համալսարանից դուրս: Հոգեկից ընկերներս ամեն օրս վերածում են տոնի: Այսքանը իմ՝ ուսանող դառնալու ջերմ հուշերից: Շնորհիվ դասախոսներիս և ընկերներիս՝ համալսարանն ինձ համար դարձավ մի անփոխարինելի ջերմաշունչ միջավայր, որտեղ ես ինձ հզոր եմ զգում:

Սուսաննա ՉԱՐՉՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 2-րդ կուրս

Ամուր ընտանիք՝ հզոր հայրենիք

Յուրաքանչյուր հայ մարդու համար ընտանիքը ամենամեծ արժեքն է, քանզի ամուր ընտանիքը հզոր հայրենիքի գրավականն է:

Հետաքրքիր, հայրենապաշտ միջոցառումներով աչքի ընկնող համալսարանական Վ. Թոթովենցի անվան N 57 հիմնական դպրոցում մայիսի 15-ին հերթական միջոցառումն էր՝ «Ամուր ընտանիք-հզոր հայրենիք» խորագրով: 3ա դասարանի դասվար Կարինե Չիբուխչյանը հոգում է, որ երեխաները դպրոցական նստարանից հասկանան՝ ինչ է ընտանիքը, արժևորեն ծնողներին, քույրիկ-եղբայրներին, սիրեն իրար և ջերմություն պարգևեն միմյանց, որ յուրաքանչյուր հայ ընտանիք տոգորվի հայրենիքի՝ Հայաստան աշխարհի սիրով:

Եվ ահա փոքրիկները՝ գունագեղ հագուստներով, դպրոցի բակում ասմունքեցին, երգեցին ու նաև շուրջպար բռնեցին մայրիկների հոտ: Որքա՜ն ջերմություն, սեր ու կարոտ կար նրանց հայացքներում ու ժպիտներում, որքա՜ն սեր դեպի ընտանիքն ու հայրենիքը: Ընտանիքում ու դպրոցում մեծերը ձգտում են հենց այսպես դաստիարակել փոքրիկներին, մանկուց սովորեցնել հարգել ընտանիքի յուրաքանչյուր անդամին, ծնողներին, որոնք իրենց կյանքն իմաստավորում են, ցույց տալիս կյանքի ճիշտ ուղի:

«Ընտանիքի օրն է այսօր, ավելի գեղեցիկ տոն չկա գուցե, այսօր բոլորիս օրն է, յուրաքանչյուրիս կարևորության, նշանակալի լինելու օրը, ընտանիքն այն վայրն է, որտեղ դու իսկապես պետք է ապահով զգաս, ընտանիքն այն վայրն է, որտեղ քեզ հետ ուրախանում ու տխրում են…»,-հնչում է երեխաների շուրթերից: Նրանք արժևորում են ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ մայրիկին և հայրիկին նվիրված մանկական ուրախ երգերի հնչյուններով լցնում դպրոցական բակը, ուր հանդիսատեսը ծնողներն են և ուսուցիչները:

Փոքրիկները բանաձևում են ընտանեկան երջանկությունը՝ ընտանեկան երջանկության բանալին բարությունն է, փոխադարձ հարգանքն ու վստահությունը:

Ես գունավոր մատիտներով,
յուղաներկով
Նկարեցի մի սիրուն տուն և
Հայրենիք անվանեցի…

Երգում են փոքրիկները և հասկանում՝ հայրենիքն սկսվում է յուրաքանչյուրի տնից, հայրենական օջախից:

Երրորդցիները կարևորում են սերը, «առանց որի չի ստեղծվի ընտանիք», իրար լրացնելով ընդգծում են բոլոր այն կարևոր արժեքները, որոնցով ամբողջանում են ընտանիքները՝ իրարից այնքան տարբեր, բայց նաև իրար այնքան նման՝ ներողամտությամբ, իրար օգնելու պատրաստակամությամբ:

Երբ քույրիկս կայտառ դեմքով
գալիս է տուն,
Թվում է, թե գյուղի դաշտից
ծաղիկներն են մտնում մեր տուն:

Ապա՝

Երբ մայրիկն է գալիս հոգնած,
բարի, ժպտուն,
Թվում է, թե վառ արևն է գալիս
մեր տուն:

Այսպես երգ ու բանաստեղծություն են ձոնում տան յուրաքանչյուր անդամին, ընդգծում յուրաքանչյուրի կարևորությունը, ապա բարձրաձայնում՝ կեցցե այն ընտանիքը, որը պիտանի զավակ է դաստիարակել:

Երեխաները վերստեղծում են ընտանիքի ծաղիկը, որի թերթիկները կորցրել են. տեղադրում են թերթերը՝ ասելով, որ սրբություն է ընտանիքը և ունի համերաշխության գույնը, իսկ «ընտանիքի արևը մայրն է, որը մեզ նայում է երազանքի աչքով»:

Խոսում են ընտանիքում և դպրոցում տիրող եղանակի մասին, որտեղ գերիշխողը ջերմությունն ու հանդուրժողականությունն է:

Ամուր ընտանիք՝ հզոր հայրենիք՝ ամփոփում են երեխաները, ապա մայրիկների և ուսուցիչների հետ շուրջպար բռնում, նկարակալների վրա ամրացրած թղթերի վրա միասին նկարում երջանիկ ընտանիքի պատկեր:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը շնորհակալություն է հայտնում փոքրիկներին՝ ծավալով փոքր, բայց տարողունակ հրավառության համար: «Այո, հզոր հայրենիք ունենալու համար պետք է ունենալ ամուր ավանդական ընտանիք, այն պահել, արժևորել ու չկորցնել, դրան գումարել մեր հավատն ու եկեղեցին: Հայ ու Հայաստան, հզոր հայրենիք»,-ասում է տնօրենը:

«Սիրելի երեխաներ, իսկապես մենք գտել ենք երջանկության բանալին. ընտանեկան երջանկության բանալին փոխադարձ սերն է, հարգանքն ու վստահությունը: Դպրոցն էլ մի ընտանիք է, և մենք ապրում ենք՝ մեր ձեռքին ունենալով ընտանեկան երջանկության բանալին»,-ասում է դասվար Կարինե Չիբուխչյանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մեկ այսպես են սովորեցրել…

Մանկավարժական համալսարանի Վ. Թոթովենցի անվան N 57 հիմնական դպրոցի 4բ դասարանի աշակերտները Կուլտուրայի ֆակուլտետի տոնականորեն ձևավորված դահլիճում ներկայացրին տարրական դպրոցի իրենց ավարտական հանդեսը:

Երեխաները խոսեցին հայրենիքի, լավ սովորելու, ծնողների և ուսուցիչների, ընկերության ու այլ արժեքների մասին՝ ամբողջ ընթացքում պարբերաբար անդրադառնալով Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի Փոքրիկ Իշխանի ուղերձներին: Հիշեցին անցած տարիների ծանոթ ու անծանոթ դեմքերին, լավ ու վատ օրերը, իրենց բոլոր չարաճճիությունները, ընկեր Աբրահամյանի հոգատար վերաբերմունքն ու դիտողությունները: Նաև տխրեցին, որովհետև անցյալում թողեցին ուսումնառության համատեղ տարիները, բայց դասընկերներից մեկը հուշեց՝ մի տխրեք, այդ ամենը մեր հուշերի ու մտքերի մեջ է:

Դպրոցականները ներկաներին պատմեցին՝ ինչ սովորեցին չորս տարիների ընթացքում, ճանաչեցին հայրենիքը, պատմեցին իրենց արմատների մասին, կարոտեցին Արցախ աշխարհը և հույս հայտնեցին՝ անպայման վերադառնալ, երգեցին հայրենիքի, ընկերության ու Արցախի մասին.

Ղարաբաղը մորս կանչն է,
Ղարաբաղը իմ կակաչն է՝
Կարմիր, բայց սև ունի սրտում:

«Եթե շատ ես ուզում՝ երազանքներն իրականանում են: Մի օր անպայման կվերադառնանք Արցախ»,- բարձրաձայնեցին փոքրիկները՝ վերադարձի հույսը փայփայելով իրենց սրտերում:

Ափսոս, որ շուտ մեծացանք, հին տոներն էլ չենք հիշում… Փոքրիկներն արտահայտեցին իրենց ափսոսանքը, բայցև փորձեցին միասին հիշել վարդագույն քաղաք Երևանն ու նրան նվիրված հին երգերը:

Այնքան հաճելի էր լսել, որ երեխաները ծանոթ են հնամյա քաղաքի պատմությանն ու անգամ նրան նվիրված երգերին:

Բեմը վերածվել էր հնի ու նորի համադրման շքահանդեսի. չորրորդցիները հետ ու առաջ էին անում ժամանակի մեջ. ներկայացրին նաև ծնողների և իրենց հետ կապված իրական պատմություններ՝ լի անհոգ օրերի չարաճճիություններով:

«Այն ո՞վ է, որ բոլոր ուրախ ու տխուր պահերին կողքիդ է, իհարկե՛, մայրիկը: Գեղեցիկ խոսքերով ու երգերով գովաբանեցին մայրիկներին.

Մայրս արևն է մեր
Ու մեր գլխի վերև
Ժպտում ու լայն թևերն է տարածում…

Իսկ ի՞նչ սովորեցին դպրոցի տարրական դասարաններում՝ ամբարեցին շատ ու կարևոր գիտելիքներ, ահա ինչու դիմեցին սիրելի ուսուցիչներին. «Դուք մեզ սովորեցրիք, թե ինչ է հոգատարությունը, որ երազանքներն իրականանում են, երբ դրանք դառնում են նպատակներ», ապա բարձրաձայնեցին՝ ով ինչ է ուզում դառնալ ապագայում, որպեսզի զարգացնի հայրենիքը, զինի բանակը:

Փոքրիկները երգեցին՝ երազանքների ճամփան մեզ տանում է վեր, միաժամանակ «ամենախելացի մեծերին» երգով հորդորեցին՝ վերջ տվեք պատերազմներին, որ անմեղ երեխաներ չմեռնեն, որ էլ չլացենք:

Ուր էլ գնանք, պետք է մեր նախնիների ոտնահետքով տուն վերադառանք, որովհետև «այդ կանչի մեջ լսվում է Հայկի ու Դավթի, Անդրանիկի ու Չաուշի, Վարդանի ու Մոնթեի ձայնը»:

Միջոցառման ավարտը հայրենիքին ուղղված ձոն էր. «Սա իմ երկիրն է՝ չափերով այնպիսին, որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ, որ չկորցնեմ հանկարծ…»:

Դասվարի հարցին, թե ինչպիսի հայրենիք կուզեն ունենալ, պատասխանեցին՝ այնպիսին, ինչպիսին կարծում ենք մեր մտքի ու հոգու մեջ:

Ու նորից հիշում են Փոքրիկ Իշխանի խոսքերը, որ պատասխանատու են բոլոր նրանց համար, ում ընտելացրել են, ուրեմն. «Մենք պատասխանատու ենք մեր ծնողների ու ընկերների համար, դպրոցի ու հայրենիքի համար, նաև մեր մոլորակի համար, և այդ պատասխանատվությունը կրելու ենք պատվով, ակնածանքով ու մեծ նվիրումով. մեզ այսպես են սովորեցրել»:

Սիրելի երեխաներ, միշտ հիշեք՝ պետք է ապրել, սովորել այնպես, որ մայր հողում ունենաք խոր արմատներ, այդ արմատները ձեր գիտելիքներն են: Այդ խոր արմատները քամին չի կարող արմատախիլ անել: Դասվար Տաթևիկ Աբրահամյանը, ով միշտ երեխաների կողքին է եղել, հիշեցրեց նրանց Փոքրիկ Իշխանի խոսքերը և հորդորեց միշտ հավատալ լավագույն ապագային. «Ուր էլ գնաք՝ այս փոքրիկ մոլորակի մասին չմոռանաք, որովհետև մարդկությունն ունի մեկ ընդհանրություն՝ մենք բոլորս մանկությունից ենք գալիս»:

Միջոցառմանը ներկա ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց ծնողներին՝ իրենց տաղանդաշատ երեխաներին համալսարանի հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվին վստահելու համար: Ապա դիմեց ներկաներին. «Այս հրաշալի փոքրիկները հնարավորություն տվեցին բոլորիս՝ մուտք գործել մի մոլորակ, որտեղ վերարտադրվեցին մեր երբեմնի երազանքները, որտեղ մեկտեղվեցին նաև իրենց այնպիսի մեգա երազանքներ, որոնք հայրենասիրությանը, հայրենիքին, բնությանը, մարդկային արժեքանությանը վերաբերող դասեր էին»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Բանակ-հասարակություն կապի ամրապնդումը՝ օրվա խնդիր

Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էր ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար, գնդապետ Արեն Սարգսյանը: Նրան ներկայացրեց ՀՊՄՀ ռեկտորի խորհրդական Հակոբ Թադևոսյանը՝ ասելով, որ Արեն Սարգսյանը զինվորական ծառայությունից բացի, զբաղվում է գիտությամբ, դասավանդում է, քաղաքագիտության թեկնածու, դոցենտ է, նաև հայտնի է որպես փորձառու իրավաբան:

21 տարի ծառայելով զինվորական համակարգում՝ նա զբաղեցրել է տարբեր պաշտոններ, ամբողջովին տիրապետում է ոլորտին և ընդգծում է՝ զինվորական ծառայության պատշաճ իրականացումը խորքային հոգեբանական, սոցիալական, դեմոգրաֆիական, արժեհամակարգային համալիր խնդիր է:

Արեն Սարգսյանը խոսեց բանակում միջանձնային հարաբերություններով պայմանավորված դեպքերի մասին՝ փաստելով, որ հայրենիքին ծառայելը չի սահմանափակվում երկու տարով կամ կյանքի ընթացքում զինվորական պատշաճ ծառայությամբ:

Այդ տեսանկյունից նա կարևորեց ընտանիքի մոդելը, միջավայրը, կրթությունը:

Ուսանողները ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատարին տարբեր հարցեր ուղղեցին, որոնք վերաբերում էին զորահավաքային զորակոչին, զինվորական ծառայության վիճակահանությանը, հիվանդություններով պայմանավորված՝ ծառայությունից ազատվելուն, տարկետման իրավունքին, զորամասից այլ զորամաս տեղափոխվելուն և այլն:

Արեն Սարգսյանն ուսանողներին հորդորեց ծանոթանալ «Պաշտպան հայրենյաց» ծրագրին, կանանց՝ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական 6-ամսյա ծառայությանը, ապա անդրադարձավ զինկոմիսարիատներում հոգեբանի հաստիքի անհրաժեշտությանը, բանակից խուսափել ցանկացող անձանց նախադեպերին և այլ հարցերի:

Արեն Սարգսյանը վստահեցրեց՝ զինված ուժերը կենդանի օրգանիզմ է. «Պետք է հասնել նրան, որ բանակում, որպես էլիտար միավոր, գնահատվի լավագույնը, ուժեղն ու դիմացկունը»:

Ո՞վ է ազգային հերոս հարցադրմանը՝ գնդապետ Սարգսյանը պատասխանեց՝ իրավական կատեգերիա է, որն իր մեջ ներառում է բարոյական, խրատական, դաստիարակչական տարրեր. ամենահեռավոր նշածողն է, որին պետք է ձգտեն ոլորտում բոլորը, սակայն այն պետք է հասնելի լինի եզակիներին:

Ուսանողների հետ հանդիպումները կլինեն շարունակական՝ վստահեցրեց Արեն Սարգսյանը, որովհետև ըստ դոցենտ Հակոբ Թադևոսյանի՝ նման հանդիպումները նպաստում են բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը, զինվորական ծառայության՝ ժամկետային պարտադիր, պայմանագրային, պահեստազորային հավաքների, զորահավաքի վերաբերյալ երիտասարդների իրազեկվածության բարձրացմանն ու մասնագիտական կողմնորոշմանը»:

«Այս գունավոր աշխարհը սև-սպիտակ լուսանկարներով»

Մայիսի 13-ին «Նարեկացի» արվեստի միությունում տեղի ունեցավ «Այս գունավոր աշխարհը սև-սպիտակ լուսանկարներով» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսի բացումը: Ներկայացվել էին ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի ուսանողների և շրջանավարտների 50-ից ավելի լուսանկարչական աշխատանքները:

Բացման խոսքով հանդես եկավ արվեստաբան Տաթևիկ Համբարձումյանը: Ցուցահանդեսի կազմակերպիչ, ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի ասիստենտ Արմեն Խաչատրյանը կարևորեց լուսանկարչության դերը արդի ժամանակներում: Նա ուսանողներին առաջարկեց համարձակ աշխատել և նոր լուսանկարչական արտահայտչամիջոցներ կիրառել:

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ Ռուբեն Երզինկյանը ողջունեց ցուցահանդեսի մասնակիցներին, կարևորեց լուսանկարչական ցուցահանդեսների դերը ուսանողների գեղագիտական ճաշակը ձևավորելու գործում:

Ամբիոնի վարիչն ընդգծեց, որ մեծ հաջողություն է նման ցուցահանդեսում ներառել ամբիոնի շրջանավարտների, ինչպես նաև բակալավրիատի առկա, հեռակա և մագիստրատուրայի ուսանողների աշխատանքները:

Արմեն Խաչատրյանն առաջարկեց երիտասարդների շրջանում գեղարվեստական լուսանկարչությունն առավել կարևորելու համար նման ցուցահանդեսներում ընդգրկել հետաքրքիր լուսանկարներ անող երիտասարդների, ցուցադրել նրանց հետաքրքիր աշխատանքները:

«Այս գունավոր աշխարհը սև-սպիտակ լուսանկարներով» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսը նախատեսվում է ներկայացնել նաև այլ ցուցասրահներում:

Հրաժեշտ տարրական դասարանին

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում կայացավ ՀՊՄՀ-ի N 57 հիմնական դպրոցի 4ա դասարանի ավարտական հանդեսը:

Դպրոցի սաների հրաժեշտը տարրական դպրոցին նշանավորվեց յուրատեսակ «Ոսկե աստղեր» մրցանակաբաշխությամբ. հաղթողներն իրենց դասավանդող ուսուցիչներն էին, որոնք սովորեցրել են լեզուներ, ուղեկցել գիտելիքների կախարդական աշխարհում, կոփել են ֆիզիկապես, սովորեցրել են սիրել հայրենիքը, աշխատանքը, բնությունն ու ճանաչել կյանքը: Մրցանակաբաշխությունն ուղեկցվում էր նաև երգով, պարով, լավ տրամադրությամբ:

Բացի պարգևներից, նրանք իրենց հարգանքի, շնորհակալության խոսքերն ուղղեցին ուսուցիչներին, որ իրենց կրթել են ու տվել լավագույնը՝ գիտելիքի աշխարհ մուտք գործելու ուղին ու բանալին:

Դպրոցի սաները շնորհակալություն հայտնեցին նաև դասվար Ագրաֆինա Հովհաննիսյանին՝ իրենց կրթության ու դաստիարակության գործը պատվով իրականացնելու համար և խոստացան բարձր պահել և՛ դպրոցի, և՛ ուսուցիչների պատիվը:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը շնորհավորեց երեխաներին, մաղթեց հաջողություններ և հույս հայտնեց, որ տարրական դպրոցի հաջողություններն ու բարձր առաջադիմությունը նրանք կշարունակեն նաև հիմնական դպրոցում:

Դասվար Ագրաֆինա Հովհաննիսյանը հիմնական դպրոց է ճանապարհում արդեն 11-րդ սերնդին: Խոստովանում է՝ ամեն մեկն իր յուրահատկությունն ունի. այս դասարանը տարբերվում է իր ներուժով, ակտիվ ու բարձր առաջադիմությամբ աշակերտներով: Ուսուցիչը վստահ է՝ ճանապարհում է կիրթ ու բանիմաց, հայրենասեր ու ակտիվ աշակերտների, որոնք իրենց ձեռքբերումները կկրկնապատկեն հիմնական դպրոցում:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

Նրա անցած ուղին օրինակելի է ապագա մանկավարժների համար

Նրա առաջ խոնարհվում էր Փարիզը, Բեռլինը զգաստ էր կանգնում, Պետերբուրգը տոնում էր, Լոնդոնը՝ ծափահարում, Նյու-Յորքը՝ փոթորկվում…

Նա Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր, բևեռախույզ, մարդասեր և մեծ հայասեր Ֆրիտյոֆ Նանսենն էր, ում մահը ցնցել էր ամբողջ աշխարհը: Այդ օրը՝ 1930 թ. մայիսի 13-ին, աշխարհը սգում էր, քանի որ կորցրել էր մեծագույն զավակներից մեկին: Նանսենն ինքն էլ իրեն համարում էր աշխարհի զավակը և համոզված էր, որ եթե դու խիղճ ունես, եթե կոչված ես

փրկելու աշխարհը, մոռանում ես ազգություն ու հայրենիք, քո հայրենիքը դադարում է լինել Ռուսաստանը, Անգլիան կամ Հայաստանը: Դու դառնում ես ամբողջ աշխարհինը, իսկ ամբողջ աշխարհը՝ քոնը, քո հայրենիքը:

Մարդասիրությունը բոլորին է տրված, պարզապես ոչ բոլորն են կարողանում այն դարձնել կյանքի նշանաբան, գործունեության բնագավառ և պարզապես ապրել մարդասիրությամբ: Իսկ նորվեգացի հետազոտողի համար մարդասիրությունը ապրելակերպ էր, շարժիչ ուժ, առանց որի արդեն փառքի գագաթնակետին հասած և պատկառելի տարիքի Նանսենը չէր կարող պատկերացնել իր գործունեությունը: Նա միակն էր, ով իր գործունեությամբ մերձավորի հանդեպ կարեկցանքը բարձրացրեց գործնական քաղաքականության մակարդակի:

Աշխարհահռչակ ճանաչում ձեռք բերած Ֆրիտյոֆ Նանսենն իր հարուստ փորձն ու գիտելիքները մշտապես կիսել է երիտասարդների հետ, քանի որ կրթված և նպատակասլաց երիտասարդներն են կերտում մեր այսօրը, ապագան և հետագայում իրենք էլ իրենց փորձով դառնում ուսուցիչ գալիք սերունդների համար: Նրա ամբողջ գիտական ուղին զուգորդվեց երիտասարդության հանդեպ հոգատարությամբ՝ նրանց մղելով դեպի գիտության ասպարեզ:

Նա ասում էր. «Ձեզնից յուրաքանչյուրը պետք է գտնի իր և միայն իր ճանապարհը: Ընդունեք հեղինակություններին, հարգեք ծերությունն ու փորձը, սակայն ամեն ինչից շատ հիմնվեք սեփական հայացքների վրա: Ձեր աչքերը բաց պահեք և տեսեք հնարավորությունները ձեր շուրջը»:

Այս խորհրդով Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի հարկի տակ էին հավաքվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնի 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները՝ դասախոս Արինե Ավագիմյանի ուղեկցությամբ: Թեման մեկն էր՝ Նանսենի մարդասիրական գործունեությունը, որն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և 1915-ի Հայոց ցեղասպանությունից հետո սովի ճիրաններից ու մահից փրկեց միլիոնավոր մարդկանց, տվեց նրանց պայծառ ապագայի հույս: Թեմայի շրջանակներում թանգարանի աշխատակիցներն ուսանողներին ներկայացրին Նանսենի բեղմնավոր գիտական ուղին, ճանապարհորդությունները, որոնք մեծ ճանաչում և հռչակ բերեցին նրան, ինչպես նաև ճանապարհ հարթեցին դեպի մեծ քաղաքականություն, որտեղ նրա միակ գործիքը դարձավ մարդասիրությունը:

Հյուրերը ծանոթացան Նանսենի և Հայաստանի հետ կապի հարյուրամյա պատմությանը: 2025-ին լրանում է ճշմարիտ եվրոպացու՝ Հայաստան կատարած այցի և նրա «Խաբված ժողովուրդ» գրքի 100-ամյակը, սակայն, ցավոք, 100 տարի առաջ բարձրացված հարցերն ու բողոքն այսօր էլ արդիական են: Նանսենը խորությամբ ուսումնասիրել և Ազգերի լիգայի ամբիոնից բարձրաձայնել է հայ ժողովրդի դարավոր պատմության ողբերգական իրադարձություններով էջերը, սատար և պաշտպան կանգնել հայ գաղթականներին: Հայերի շահերի պաշտպանն արդեն ուներ իր հաստատ համոզմունքներն ու հիասթափությունները՝ եվրոպական քաղաքագետների վարած քաղաքականությունից: Հայության իրավունքների պաշտպանության համար նա տարբեր միջոցների էր դիմում, իսկ ժողովրդին խորհուրդ տալիս հույսը դնել սեփական կարողությունների վրա: Իր հեղինակած ճամփորդական փաստաթղթի՝ Նանսենյան անձնագրի շնորհիվ 320.000 հայեր կարողացան փրկվել և հայկական օջախներ ստեղծել աշխարհի 54 երկրներում և իրենց գործունեությամբ սատարել ոչ միայն տվյալ երկրի, այլև իրենց հայրենիքի՝ Հայաստանի ծաղկմանն ու զարգացմանը:

Հայ ժողովրդին օգնելու նպատակով արդեն 60 տարեկան Նանսենը շրջում է աշխարհով մեկ և Հայոց ցեղասպանության ու հայ գաղթականներին հայրենիք վերադարձնելու մասին դասախոսություններ կարդում ԱՄՆ-ում, եվրոպական մի շարք երկրներում և գումար հավաքում: Այդ գումարներով Նանսենը կարողանում է Հայաստան բերել շուրջ 7000 հայ գաղթականների: Նանսենի ջանքերով Սիրիայում (Հալեպի Նոր գյուղ թաղամասում) և Լիբանանում (Բուրջ Համուդում) գաղթականների համար հիմնվում են ավաններ, որբանոց:

Երբ սպառվում են հայ ժողովրդի համար գումար հայթայթելու բոլոր հնարավոր միջոցները, մեծ գիտնականն իր լայնեզր գլխարկը պարզում և ողորմություն է հավաքում յուրաքանչյուր հայ երեխայի առջև մեկ ամսան տաք ապուրի համար:

Այսպիսին էր Ֆրիտյոֆ Նանսենը՝ մարդասեր, հոգատար, աշխատասեր, խստապահանջ… Նրա անցած ուղին օրինակ է մանկավարժների համար, որոնք պետք է սերունդներ դաստիարակեն և նրանց մեջ սերմանեն մեծ մարդասերի կարգախոսը. «Մարդասիրությունը միակ ռեալ հնարավոր քաղաքականությունն է»:

Այս կարգախոսով էլ հյուրերը հեռացան թանգարանից՝ իրենց հետ տանելով երիտասարդներին ուղղված Նանսենի պատգամը. «Բարեկամներս, դուք երիտասարդներ եք: Ձեր ամբողջ կյանքը լի է ամեն տեսակ հնարավորություններով և արկածներով: Ես վստահ եմ, որ ձեզնից ոմանք ժամանակին այս կամ այն ասպարեզում հայտնի ճանապարհորդ-հայտնագործող կդառնան:

Կյանքում մենք բոլորս հայտնագործողներ ենք, ինչ ճանապարհով էլ գնալիս լինենք:

Սակայն անկախ այն բանից, դուք բնախույզ կդառնաք թե ոչ, ուզում եմ խորհուրդ տալ ձեզ՝ կյանքում ոչ մի դեպքում չնահանջեք ձեր սկսած գործից, քանի դեռ այն չեք կատարել: Գործին նվիրաբերեք ձեր սիրտը, ձեր հոգին: Գործը կիսատ չթողեք: Ձեր ուժերի ներածի չափով այն մինչև վերջ հասցրեք: Եվ մի հանգստացեք այնքան ժամանակ, մինչև որ չզգաք՝ ավելի լավ այլևս չեք կարող կատարել:

Ես համոզված եմ, որ դա է կյանքում իսկական հաջողության հասնելու կարևոր գաղտնիքը, և միայն այդպես դուք կարող եք բավականություն զգալ այն գիտակցությունից, որ գործում եք այնպես, ինչպես վայել է իսկական մարդուն: Քանզի մենք բոլորս լույս աշխարհ ենք եկել աշխատանքի մեր բաժին մասը կատարելու համար: Իսկ չէ՞ որ ձեզ է վիճակված ստեղծել ապագան, աշխարհն ավելի լավը դարձնել, քան կա այսօր»:

Անահիտ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի գլխավոր ավանդապահ

Հայկական պարմական ժառանգության հետքերով

2024 թվականի մայիսի 12-ին, ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում, հայոց լեզվի դասերին զուգահեռ, «Թանգարանների միջազգային օրվան» ընդառաջ տեղի ունեցավ բաց դաս, որի ընթացում դպրոցի սաները ևս մեկ անգամ հիշեցին ու նշեցին այն բոլոր թանգարանները, արվեստի օջախները, որոնց մասին բազմիցս խոսվել էր ուսումնական տարվա ընթացքում: Աշակերտներից ոմանք արդեն իսկ այցելել էին այդ թանգարաններն ամառային արձակուրդներին դպրոցի կողմից կազմակերպված էքսկուրսիաների ընթացքում (Սիլվա Կապուտիկյանի, Հովհաննես Թումանյանի, Արա Սարգսյանի և Հակոբ Կոջոյանի, Մարտիրոս Սարյանի, Եղիշե Չարենցի տուն-թանգարանները և այլն):

Հավելենք, որ 1978 թվականից մայիսի 18-ին «Թանգարանների միջազգային օրը» սկսել են նշել ավելի քան 150 երկրներում, իսկ Հայաստանում ` 2005 թվականից:

Ուսուցչական համակազմը ներկայացրեց այն ցանկը, որոնք առաջնային են հայրենիքում այցելության համար՝ մասնավորապես Մատենադարանը, Հայաստանի պատմության թանգարանը, Հայաստանի ազգային պատկերասրահը, Գրատպության թանգարանը (Երևան): Անդրադարձ եղավ նաև Գյումրիում գործող մշակութային օջախներին:

Առանձին ներկայացվեցին երաժշտության հետ առնչություն ունեցող թանգարանները, մասնավորապես Ալեքսանդր Սպենդիարյանի (1963 թ.), Արամ Խաչատրյանի (1978 թ.), Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանները (2019 թ.), Կոմիտասի անվան թանգարան-ինստիտուտը (2014-2015 թթ), Շառլ Ազնավուրի կեցավայր-թանգարանը (2011 թ.):

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակներում (նշվում է 1983 թվականից ապրիլի 18-ին) խոսվեց նաև Հայաստանի պատմական վայրերի մասին, որոնցից շատերը համարվում են համաշխարհային գանձարանի նմուշներ: Ի դեպ, համաշխարհային ժառանգության կոնվենցիան ժառանգության պահպանության բնագավառում անկախ Հայաստանի վավերացրած առաջին միջազգային փաստաթղթերից է, որը վավերացրել է 1993 թ. սեպտեմբերի 5-ին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տաճարը, Սուրբ Հռիփսիմեի և սուրբ Գայանեի եկեղեցիները, Զվարթնոց հնէաբանական հուշարձանը, Գեղարդ, Սանահին, Հաղպատ վանական համալիրները, Ազատ գետի վերին հոսքը, որոնք ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի նյութական մշակութային ժառանգության ցուցակում: Գովելի է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակը վերածնունդցիները ներկայացրին զեկույցներով՝ պատմելով հայկական խաչքարերի, «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի, ավանդական «Քոչարի» պարի, հայոց տառերի գրելու արվեստի ու հայկական լավաշի մասին համաշխարհային մշակութային գանձարանում որպես իրենց նախնիների ներդրում, որը եկել, պահպանվել ու մեզ է հասել դարերով:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

Կարևորելով մանկավարժական պրակտիկան

Յուրաքանչյուր մարդու կյանքում կարևոր դեր ունի մեդիան՝ ձևավորելով արժեքներ, սոցիալական նորմեր, վարք, կյանքի սցենարներ և աշխարհի ամբողջական պատկեր: Մեդիակրթության նպատակն է նոր սերնդին նախապատրաստել ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում ապրելուն, հասկանալուն ու գիտակցելուն մարդու հոգեկանի վրա զանգվածային տեղեկատվության ազդեցության մեխանիզմները:

Կարևորելով մեդիակրթությունը՝ մենք՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողներս, ակտիվ-կիրառական պրակտիկայի շրջանակներում, Ս.Սպանդարյանի անվան N 24 հիմնական դպրոցի 2-րդ դասարանում, մեթոդիստ Տաթևիկ Ենոքյանի ղեկավարությամբ, իրականացրինք ինտեգրված բաց դաս-միջոցառում ` Մեդիակրթություն-«Անձնական տվյալների գաղտնիություն» խորագրով:

Ժամանակակից աշխարհում այսօր առաջնահերթ է դառնում համերաշխության և համագործակցության մանկավարժության վրա հիմնված կրթության կազմակերպումը, կրթություն, որը հնարավորություն է տալիս սովորողներին և մանկավարժներին վերափոխել աշխարհը՝ միասին աշխատելով փոխվստահության մթնոլորտում: Այն ենթադրում է մասնակցային, համագործակցային, խնդիրները վեր հանող, ինտերակտիվ ուսումնառություն՝ հիմնված կարողությունների ձևավորման և զարգացման վրա:

Կարևորելով արդի տեղեկատվական դարում մեդիակրթության առաջնայնությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2002 թ. Սևիլյան կոնֆերանսի ժամանակ շեշտադրում է հետևյալը. «Խորհուրդ է տրվում մեդիակրթությունը ներառել և՛ ազգային կրթական համակարգում՝ որպես պարտադիր առարկա, և՛ ինքնակրթության ու շարունակական կրթության ոլորտներում»:

Բաց դասի նպատակն էր՝ զարգացնել սովորողների խոսքն ու քննադատական մտածողությունը, նպաստել անձնական տվյալների և դրանց գաղտնիության մասին գիտելիքների ձեռքբերմանը, ձևավորել լրատվությունը վերլուծելու հմտություններ:

Բաց-դասի ընթացքում կիրառել ենք մի շարք փոխներգործուն մեթոդներ, խաղեր, տեղեկատվական գործիքներ, խմբային աշխատանք, դերային խաղ:

Բաց դաս-միջոցառմանը ներկա էին Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հ. Խաչատրյանը, Մանկավարժության ամբիոնի դասախոս Լ. Պողոսյանը, Հանրային լրագրության ակումբի ներկայացուցիչ Հ. Փայտյանը, դպրոցի տնօրինությունը և ուսուցչական կազմը:

Արուս ԱՅՎԱԶՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետ
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 3-րդ կուրս

Ուսումնական տարեվերջն ամփոփեցին համերգային ծրագրով

Մանկավարժական համալսարանի մշակութային ֆակուլտետների ու ամբիոնների նախաձեռնությամբ կազմակերպվող տարեվերջյան համերգները ավանդական են դարձել: Այս անգամ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հաշվետու համերգ, որի նպատակն էր ներկայացնել ուսումնական տարվա՝ տարբեր կուրսերի երաժշտական խմբերի ու անհատ կատարողների մասնագիտական-կատարողական ձեռքբերումները:

Համերգն առանձնահատուկ էր նրանով, որ ուսանողները ելույթ էին ունենում երաժիշտ-մանկավարժների հետ, ինչը յուրահատուկ հարթակ էր պրոֆեսիոնալ երաժիշտների հետ մեկ բեմում միաժամանակ հանդես գալու համար:

Ներկաները սիրով ըմբոշխնեցին հայ և համաշխարհային կոմպոզիտորների՝ Կոմիտասի, Էդուարդ Բաղդասարյանի, Առնո Բաբաջանյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Էդուարդ Աբրահամյանի, Շոպենի, Նիկոլո Պագանինիի, Աստոր Պիացոլլայի, Սերգեյ Ռախմանինովի, Ֆերենց Լիստի և այլոց հանրաճանաչ ստեղծագործությունները:

Բազմաբնույթ ծրագրում ներառված դաշնամուրային, ջութակով ու ակորդեոնով ստեղծագործական կատարումները հետաքրքիր էին, որոնք նորովի մատուցվեցին հանդիսատեսին:

Համերգի մեկնարկը վոկալ անսամբլի ելույթով տրվեց և ավարտվեց Խաչատուր Ավետիսյանի և Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործություններով՝ քանոնահարների անսամբլի կատարմամբ:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Աննա Հարությունյանը գոհ էր դասախոսական և ուսանողական համատեղ աշխատանքի արդյունքից, իրենց երախտիքի խոսքն արտահայտեցին նաև ուսանողները: Իսկ հանդիսատեսն իր վերաբերմունքն արտահայտեց ծափերով: Երաժշտական բազմաբնույթ ծրագիրը հաջողվեց. պետք է ընդգծել, որ լսարանային դասերից դուրս նման համերգները առավել հետաքրքիր են դարձնում ուսանողի առօրյան՝ ապագա մանկավարժ-երաժիշտներին համար դառնալով գիտելիքների յուրօրինակ ստուգատես:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է 2024/2025 ուսումնական տարվա հայցորդական /հետբուհական/ կրթության ընդունելություն (վճարովի հիմունքներով)

Հայցորդական (հետբուհական) կրթության ընդունելության մրցույթին կարող են մասնակցել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում համալսարանի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը

2. Մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին)

3. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները:

4. 2 տպագրված հոդված կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ

5. 3 լուսանկար (3x4 չափի)

6. Ինքնակենսագրություն (CV)

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն՝ 206 սենյակ, հեռ`. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ